

Օդի որակ, աղմուկ և վիբրացիա



Ներկա իրավիճակը


- Գյուղական տեղանքով պայմանավորված, օդի և աղմուկի աղտոտման ելակետային մակարդակները Ամուլսարի շրջակայքում բավականին ցածր են: Մերձակայքում ամենատարածված արտանետումները փոշու և կոշտ մասնիկների արտանետումներն են:
- Տեղանքում առկա են աղմուկի և վիբրացիայի մի քանի աղբյուրներ:

Որո՞նք են հավանական խնդիրներն ու ազդեցությունները

- Շինարարության և շահագործման աշխատանքները ենթադրում են փոշու առաջացում: Փոշին նստելու է աշխատանքների կատարման վայրից առավելագույնը 1կմ շառավիղի շրջակայքում և չի կարող վնասել համայնքներին:
- Շինարարության և շահագործման աշխատանքները ուղեկցվում են որոշակի աղմուկով և վիբրացիաներով, սակայն դրանք լինելու են միջազգային և ազգային չափանիշների սահմաններում և էապես չեն ազդի տեղական համայնքների վրա:

Հավանական ազդեցությունների կառավարմանն ուղղված Շնչերության քայլերը

- Փոշին ու աղմուկը սահմանափակելու համար նախատեսվում է ներփակել հանգույցները, այդ թվում՝ ջարդիչ կայանը և փոխակրիչը:
- Փոշու արտանետումները սահմանափակելու նպատակով մերձատար ճանապարհները նախատեսվում է պարբերաբար ջրել դրանք անընդհատ խոնավ պահելու նպատակով: Նախատեսվում է նաև կիրառել արտանետումների կարգավորման սարքերով ապահովված տեխնիկա:
- Մեծ աղմուկ առաջացնող գործողությունները, ինչպիսիք են օրինակ՝ պայթեցումները, իրականացվելու են ցերեկային ժամերին՝ ազդեցությունը սահմանափակելու նպատակով, ինչպես նաև նախատեսվում է նախապես հրապարակել պայթեցումների ժամանակացույցերը: Բացի այդ, պարբերաբար կազմակերպվելու են աղմուկի և վիբրացիայի մակարդակների ստուգումներ՝ կազմելով համապատասխան հաշվետվություններ:



Ո՞ր ազդեցությունները կլինեն հարասն

- Ակնկալվում է, որ կառավարման և մեղմացման միջոցառումների կիրառման պարագայում օդի որակի հետ կապված բացասական ազդեցությունները կվերանան:
- Կառավարման միջոցառումներ իրականացնելու դեպքում աղմուկով պայմանավորված ազդեցությունները համայնքների վրա բացառվում են: